

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Նկարում պատկերված է.

- 1) օդի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 2) թթվածնի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության
- 3) օդի ճնշման նվազումը՝ ըստ բարձրության
- 4)  $1\text{մ}^3$  օդում առկա թունավոր գազերի զանգվածի նվազումը՝ ըստ բարձրության



2 Հյուսիսային բևեռային շրջագծի և նրանից հարավ գտնվող Ա կետով անցնող գուգահեռականի միջև իրական ամենակարճ հեռավորությունը կազմում է 2664 կմ: Ա կետի աշխարհագրական լայնությունը կլինի.

- 1) հս.լ 28,5°
- 2) հս.լ 42,5°
- 3) հս.լ 36,5°
- 4) հս.լ 24,5°

3 Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ քարտեզի մասշտաբը՝ 1:2400000: Երկու կետերի իրական հեռավորությունը կլինի.

- 1) 150կմ
- 2) 15կմ
- 3) 384 կմ
- 4) 3840կմ

4 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հասարակածի աշխարհագրական լայնությունը 90° է, իսկ բևեռներինը՝ 180°:
- 2) Հունիսի 22-ից մինչև սեպտեմբերի 21-ը հս.լ 66°300'-ից հյուսիս բևեռային ցերեկների տևողությունը կրճատվում է:
- 3) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները (գետեր, քամիներ և այլն) շեղվում են իրենց սկզբնական ուղղությունից հյուսիսային կիսագնդում՝ դեպի աջ, հարավայինում՝ ձախ:
- 4) Երևանի գոտիական ժամանակը առաջ է Տոկիոյի գոտիական ժամանակից:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:

77 Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

(79-80) Երկրի բնակչության թիվը 40 000 000 է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 000 000, տարածքի մակերեսը՝ 200 000 կմ<sup>2</sup>:

79 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

80 Որոշել բնակչության միջին խտությունը:

5 Այն օդը, որն իր մեջ եղած ջրային գոլորշիներից ավելին չի կարող ընդունել կոչվում է.

- 1) հագեցած օդ
- 2) ամպ
- 3) մառախուղ
- 4) չոր օդ

6 Երկու ջրամերժ շերտերի միջև գտնվող ստորերկրյա ջրերը կոչվում են.

- 1) քաղցրահամ
- 2) գրունտային
- 3) հանքային
- 4) միջշերտային


7 Քարտեզի վրա հավասար մթնոլորտային ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոբար
- 2) իզոթերմ
- 3) իզոհիպս
- 4) իզոբար

8 Երևան քաղաքում հունվարի 10-ին դիտվել է հետևյալ օդի ջերմաստիճանները՝ -5°, -9°, -6°, -4°, 3°, 5°, 2°, -2°: Օդի օրական միջին ջերմաստիճանը կլինի.

- 1) -4°
- 2) 2°
- 3) 3°
- 4) -2°


9 Ռելիեֆի կտրվածքի ո՞ր կետում են թափվում ամենաշատ տեղումներ:



- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

10 Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) մարտի 21-ին
- 2) հունիսի 22-ին
- 3) սեպտեմբերի 23-ին
- 4) դեկտեմբերի 22-ին



11 Բարեխառն ծովային կլիման բնորոշ է.

- 1) Ավստրալիայի ծայր հարավ-արևմտյան մասին
- 2) Պատագոնիայի արևելյան առափնյա շրջաններին
- 3) Հյուսիսային Ամերիկայի բարեխառն գոտու արևմտյան և արևելյան մասերին
- 4) Ուրալյան լեռներից արևելք ընկած շրջաններին

12 Ո՞ր բնական զոնային են առավելապես բնորոշ քանու ներգործության շնորհիվ ստեղծված ռելիեֆի ձևերը:

- 1) բարեխառն գոտու անտառների
- 2) սավանաների և նոսրանտառների
- 3) անապատների և կիսաանապատների
- 4) հասարակածային խոնավ, մշտադալար անտառների


13 Այդ կղզու գրեթե կենտրոնով է անցնում հասարակածը: Այդ կղզին Մալակկայի նեղուցով բաժանվում է Մալակկա թերակղզուց: Այդ կղզին է.

- 1) Սուլավեսին
- 2) Կալիմանտանը
- 3) Սումատրան
- 4) Ճավան

14 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային ծովեզերքին՝ հարակից կղզիների տարածքում, տարածվում է խառը և լայնատերև անտառների զոնան:
- 2) Հյուսիսային Ամերիկայում լայնակի ձգվող լեռների բացակայության շնորհիվ օդային զանգվածները ազատ շրջանառություն են կատարում՝ երբեմն առաջացնելով հզոր պտտահողմեր:
- 3) Կալիֆոռնիական սառը հոսանքի ազդեցության շնորհիվ առափնյա շրջաններում թափվում են առատ տեղումներ:
- 4) Մեծ Արջի, Մեծ Ստրուկների լճերը առաջացել են գետահունների լավային արգելափակման հետևանքով:

75 Քարտեզի վրա ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով:



- 1) լեռնային սևահողեր
- 2) կուլտուր-ռոտզելի հողեր
- 3) անապատակիսաանապատային
- 4) աղուտ-ալկալի հողեր (աղուտներ)

76 Որոշել գետի հոսքը 1 ժամում, եթե գետի ջրի արագությունը 1.5 մ/վ է, իսկ գետահունի լայնակի կտրվածքի մակերեսը 6մ<sup>2</sup>:

Տրվածներից ո՞րն է գրադեցնում քարտեզի վրա Ա տառով նշված տարածքները:



- 1) անտառատափաստանները և տափաստանները
- 2) փշատերև անտառները
- 3) տունդրան և անտառատունդրան
- 4) արկտիկական անապատները

15 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Էվկալիպտները տարածվում են բացառապես անապատների և կիսանապատների զոնայում:
- 2) Ավստրալիայի հյուսիս-արևելյան ափերը ողողող Կորալյան ծովի մակերևութային տաք ջրերում բուռն զարգանում են կորալային պոլիպները:
- 3) Ավստրալիայի մակերևույթի հիմքում ընկած է Ավստրալիական հնագույն պլատֆորմը:
- 4) Ամենաշատ տեղումներ ստանում են Մեծ Ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լանջերը:

16 «Նեդուց-դրանով բաժանված կղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Բերինգի-Գրենլանդիա
- 2) Մագելանի-Հրո Երկիր
- 3) Բար-Էլ-Մանդեբի-Մադագասկար
- 4) Թորեսի-Թայվան

17 «Լեռնային համակարգ-լեռնագագաթ» սկզբունքով կազմված գույգերից գույգերից ո՞րն է ճիշտ:


- 1) Էլբուրս-Դեմավենդ
- 2) Մեծ Կովկաս-Արարատ
- 3) Անտարկտիկական Անդեր-Ակոնկագուա
- 4) Ապալաչներ-Կոսցյուշկո

18 Ասիա աշխարհամասում հոսող գետեր են.

- 1) Թեմզան և Հռենոսը
- 2) Օբը և Ինգուրին
- 3) Գնեպրը և Դոնը
- 4) Վոլգան և Դանուբը

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Վիկտորիա լիճը:

- 1) Գ.
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ.



20 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Պրետորիա մայրաքաղաքը:

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

21 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումը և վերաբաշխումը՝ ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի կոչվում է.

- 1) տարաբնակեցում
- 2) միգրացիա
- 3) ուրբանիզացում
- 4) բնակչության տեղաբաշխում

22 Բնական շարժի հետևանքով մարդկանց սերունդների անընդհատ վերարտադրության և հերթափոխման գործընթացի ամբողջությունը կոչվում է.

- 1) բնակչության մեխանիկական շարժ
- 2) ժողովրդագրական պայթյուն
- 3) ժողովրդագրական ճգնաժամ
- 4) բնակչության վերարտադրություն

23 Հարավ-Արևելյան Ասիայի այդ երկիրն ամբողջությամբ ընկած է կղզիների վրա: Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեություն: Այդ երկրում կաուչուկի հումք են ստանում նաև կոկոսյան արմավենուց: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Մյանմա
- 2) Ինդոնեզիա
- 3) Ֆիլիպիններ
- 4) Բրունեյ

69 Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար:

- 1) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ
- 2) երկաթուղային հանգույցներ են
- 3) նրանց միջով է հոսում Հրազդան գետը
- 4) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ

70 ՀՀ տրված մարզերից որի՞ տարածքում է գտնվում «Դիլիջան» ազգային պարկը:

- 1) Արարատի
- 2) Սյունիքի
- 3) Տավուշի
- 4) Շիրակի

71 Ո՞ր գույգում են տրված խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհի առաջատար երկրները:

- 1) Իրան և Մոնղոլիա
- 2) Ճապոնիա և Ղազախստան
- 3) Հնդկաստան և Բրազիլիա
- 4) Թուրքիա և Աֆղանստան

72 Տրվածներից ո՞րն է մթնոլորտի աղտոտման հետևանք:

- 1) ջերմոցային էֆեկտի առաջացում
- 2) ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացում
- 3) էրոզիոն երևույթների զարգացում
- 4) գերխոնավ հողերի բերրիության անկում

73 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ջրավազաններն աղտոտող հիմնական նյութերը աերոզոլներն(օդակախույթ) են:
- 2) Անտառապատ տարածքների կրճատումն ուղեկցվում է գենոֆոնդի աղքատացմամբ:
- 3) Ջերմոցային էֆեկտի հետևանքով բարձրանում է ներքնոլորտի տարեկան միջին ջերմաստիճանը:
- 4) Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուրներից է մետաղաձուլությունը:

63 **Բնութագրումով որոշել երկիրը:**

Հարավ-արևմտյան Ասիայի տարածքի մեծությամբ երկրորդ երկիրն է: Երկրի հարավային ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի ջրերը: Բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը: Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Աֆղանստան
- 2) Իրան
- 3) Թուրքիա
- 4) Հնդկաստան

64 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Ամենաբարձր գագաթն ունի ավելի քան 5000 մ բարձրություն:
- 2) Շրջապատված է եզրային լեռների համակարգերով:
- 3) Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:
- 4) Բացակայում են գործող հրաբուխները:

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:
- 2) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
- 3) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:
- 4) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:

66 **Տրվածներից ո՞րն է բնորոշ ՀՀ չոր մերձարևադարձային կլիմայի տիպին:**

- 1) տարածվում է 1500-2000 մ բարձրություններում
- 2) ձմեռը կարճատև է և մեղմ
- 3) տեղումների միջին տարեկան քանակը հասնում է 800-900 մմ-ի
- 4) օդի միջին հունվարյան ջերմաստիճանը տատանվում է +10<sup>0</sup>-ի շուրջ

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) ՀՀ-ն հարևան պետությունների համար բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
- 2) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 3) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 4) Արարատյան դաշտին բնորոշ է գծային տարաբնակեցումը:

68 **ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
- 2) ՀՀ գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 3) Հացահատկի ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 4) Խաղողի մշակության գլխավոր շրջաններից է Լոռու սարահարթը:

24 **Երկրում ածխի պաշարները կազմում են 2,4մլրդ. տ: Արդյունահանման տարեկան չափը պահպանելու դեպքում այն կբավականացնի 375 տարի: Որքա՞ն է ածխի արդյունահանման տարեկան չափը (արտահայտած՝ տոննայով):**

- 1) 1350000
- 2) 6400000
- 3) 1562500
- 4) 2025000

25 **«Պետություն – տիրապետող կրոն» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Վրաստան-քրիստոնեություն
- 2) Իրան-հուդայականություն
- 3) Ադրբեջան-մահմեդականություն
- 4) Ճապոնիա-սինտոիզմ

26 **«Պետություն-պատկանող կղզի» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Ավստրալիա-Թասմանիա
- 2) Ֆրանսիա - Կորսիկա
- 3) Դանիա-Գրենլանդիա
- 4) Հունաստան-Կիպրոս

27 **«Հողաբարելավման միջոցառում-բնական օբյեկտ» սկզբունքով տրված զույգերից ո՞րն է սխալ:**

- 1) հակաէրոզիոն միջոցառում- ձյունամերձ լանդշաֆտներ
- 2) չորացում (ցամաքեցում)- գերխոնավ հողեր
- 3) քիմիական մելիորացում-աղուտներ
- 4) արհեստական ոռոգում-մշակովի հողեր

28 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Վրաստանի մակերևույթում ընդարձակ հարթավայրերի շնորհիվ գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են երկրի հողային ֆոնդի 90%-ը:
- 2) Վրաստանի կլիման արևելքում խոնավ է, արևմուտքում՝ չորային:
- 3) Վրացիները կազմում են երկրի բնակչության մոտ 98%-ը:
- 4) Վրաստանում տեղական մանգանի, ներմուծվող երկաթի հիման վրա աշխատում է Ռուսթավի լիքվ ցիկլի մետալուրգիական կոմբինատը:

29 **Բնակչության բնական աճի ավելացման ուղղությամբ առավել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն են վարում.**

- 1) Նիգերիան և Սուդանը
- 2) Ինդոնեզիան և Հնդկաստանը
- 3) Չինաստանը և Պակիստանը
- 4) Ֆրանսիան և Գերմանիան

30 **Խորհրդարանական հանրապետություններ են.**

- 1) Ադրբեջանը և Բրազիլիան
- 2) Իտալիան և Իսրայելը
- 3) Ֆրանսիան և Հունաստանը
- 4) Ռուսաստանը և Վրաստանը

31 «Պետություն-էլեկտրաէներգետիկայի մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) ԱՄՆ-ջերմային էներգետիկա
- 2) Ֆրանսիա-ատոմային էներգետիկա
- 3) Իսլանդիա-ջերմային էներգետիկա
- 4) Նիդեռլանդներ-ջրային էներգետիկա

32 Ո՞րն պնդումն է ճիշտ:

- 1) Աշխարհում խոզերի գլխաքանակի շուրջ 50%-ը բաժին է ընկնում Ասիայի մահմեդական երկրներին (Իրան, Սաուդյան Արաբիա և այլն):
- 2) Հացահատիկ արտահանող երկրներից են Եգիպտոսը, Ճապոնիան, Բրազիլիան, Հայաստանը:
- 3) Աքվակուլտուրան զարգացած է բարեխառն գոտու տափաստանների ու նոսրանտառների զոնայում:
- 4) Մերձարևադարձային և արևադարձային երկրները մասնագիտանում են ճիտրուսային պտուղների մշակման գծով:

33 Կյանքի միջին տևողության ցածր ցուցանիշներ ունեն.

- 1) Ավստրալիան և Նոր Զելանդիան
- 2) Մոզամբիկը և Անգոլան
- 3) Շվեդիան և Շվեյցարիան
- 4) Ճապոնիան և Ֆրանսիան

34 Աշխարհում նավթ արտահանող առաջատար երկրներ են.

- 1) Ուկրաինան և Թուրքիան
- 2) Իտալիան և Հունաստանը
- 3) Վենեսուելան և Նորվեգիան
- 4) Ֆրանսիան և Շվեյցարիան

35 Տրված լճերից ո՞րն ունի սառցադաշտային ծագում:

- 1) Պարզ լիճը
- 2) Փարվանա լիճը
- 3) Քարի լիճը
- 4) Ուրմիա լիճը

36 Տրված «լեռներ-ծագում» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:

- 1) Արևելյան Սևանի-ծալքաբեկորավոր
- 2) Եղնախաղի-հրաբխային
- 3) Բարգուշատի-ծալքաբեկորավոր
- 4) Գուգարաց-հրաբխային

37 ՀՀ-ում ամենամեծ արտեզյան ավազանն է.

- 1) Արարատյանը
- 2) Սիսիանինը
- 3) Փամբակինը
- 4) Շիրակինը

57 Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է Եվրասիայում զբաղեցնում ամենամեծ տարածքը:

- 1) հասարակածային
- 2) արկտիկական
- 3) բարեխառն
- 4) արևադարձային

58 Ո՞ր գույգում տրված անապատներն են գտնվում Հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում:

- 1) Կալահարի և Ատակամա
- 2) Սահարա և Թար
- 3) Կարակում և Ավազային Մեծ անապատ
- 4) Ռուբ Էլ Խալի և Լիբիական անապատ

59 Ո՞ր գույգում տրված երկրներում է կյանքի միջին տևողության ցուցանիշը ամենացածրը:

- 1) Անգոլա և Զամբիա
- 2) Ճապոնիա և Նիգերիա
- 3) Ավստրալիա և Կանադա
- 4) Շվեդիա և Իրան

60 Տրված պնդումներից ո՞րն է ուրբանիզացիայի վերաբերյալ տեղեկատվություն (ինֆորմացիա) ներառում:

- 1) Հնդկաստանը, Չինաստանը ունենալով մարդկային և բնական հսկայական ներուժ, այնուամենայնիվ ՀՆԱ-ի 1 շնչի ցուցանիշով զիջում են զարգացած երկրներին:
- 2) Բնակչության թիվն ու խտությունը մեծ է այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ բարձր է բնակչության վերարտադրությունը:
- 3) Բնակչության խտության ցուցանիշը տարածքի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:
- 4) Եթե 1900թ. քաղաքներում էր ապրում աշխարհի բնակչության 13.3 %-ը, 1950թ.՝ 29.3%-ը, ապա 2008թ.՝ 50%-ը:

61 ՌԴ տրված քաղաքներից ո՞րն է այլումինի արտադրության խոշոր կենտրոն:

- 1) Կրասնոդար
- 2) Իվանովո
- 3) Բրատսկ
- 4) Լիպեցկ

62 Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արտահանության մոտ կեսը բաժին է ընկնում հանքային հումքին և վառելիքին:
- 2) Հյուսիսային Եվրոպայում տարածքով ամենամեծ հանրապետությունն է:
- 3) Աշխատանքային ռեսուրսների գերակշիռ մասը ընդգրկված է տնտեսության սպասարկման ոլորտում:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:



51 Հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս 225<sup>0</sup> ազիմուտը:

- 1) հարավ - արևմուտքը
- 2) հյուսիս - արևելքը
- 3) հյուսիս - արևմուտքը
- 4) հարավ - արևելքը

52 Ժամը քանիսը կլինի Երևանում, եթե Լոնդոնում ժամը 12<sup>00</sup>-ն է:

- 1) 24<sup>00</sup>
- 2) 9<sup>00</sup>
- 3) 12<sup>00</sup>
- 4) 15<sup>00</sup>

53 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Օդի ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը հասարակածային լայնություններում փոքր է:
- 2) Վերնոլորտը մթնոլորտի Երկրի մակերևույթին ամենամոտ շերտն է:
- 3) Գիշերվա և ցերեկվա հերթափոխության գլխավոր պատճառը մթնոլորտի շրջանառությունն է:
- 4) Լեռնային շրջաններում ըստ բարձրության մթնոլորտային տեղումների քանակը նվազում է:

54 Տրված ապարներից ո՞րն է առաջանում, եթե մագման չի հասնում Երկրի մակերես, այլ սառչում է կես ճանապարհին, երկրակեղևի խորքում:

- 1) կերակրի աղ
- 2) այրվող թերթաքար
- 3) կվարց
- 4) գրանիտ

55 Համաշխարհային օվկիանոսում ներծին (ներքին) ուժերի ազդեցությամբ առաջանում է՝

- 1) օվկիանոսային հոսանք
- 2) մակընթացություն
- 3) տեղատվություն
- 4) ցունամի

56 Մերձարևադարձային գոտու կլիմայի տիպերից որի՞ն են բնորոշ չոր և տաք ամառներ և մեղմ ու խոնավ ձմեռներ:

- 1) խոնավ
- 2) ցամաքային
- 3) միջերկրածովային
- 4) մուսսոնային

38 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) ՀՀ-ում ցածրադիր գոտու համեմատ միջին բարձրության լեռնային գոտում տեղումների քանակը նվազում է՝ հասնելով 230-300մմ:
- 2) Միջերկրական ծովի կողմից եկող օդային զանգվածներն Ադսոնի հովտով անցնում են Փամբակի գոգավորություն՝ բերելով շատ խոնավություն:
- 3) ՀՀ-ում առավելագույն տեղումները թափվում են ձմռանը, նվազագույնը՝ մայիս-հունիսին:
- 4) Չոր, խիստ ցամաքային կլիման ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000մ բարձրություններում:

39 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) ՀՀ ամբողջ տարածքում անասնապահությունը զարգացել է բացառապես բնական արոտային թարմ խոտի բազայի վրա:
- 2) ՀՀ խաղողագործական շրջաններ են Արփայի հովիտը և Ջանգեզուրի հարավը (Մեղրի):
- 3) Սևան-Հրազդան ոռոգչաէներգետիկ համակարգի միջոցով սնվում են Արարատյան դաշտի մի շարք մայր ջրանցքներ:
- 4) ՀՀ-ում ձկնաբուծությունը զարգանում է նաև Արարատյան դաշտի աղակալած հողերում ստեղծված արհեստական լճակներում:

40 ՀՀ-ում ոչ տեղական հումքի վրա հիմնված մետաղաձուլության արտադրություն է.

- 1) ալյումինինը
- 2) ոսկունը
- 3) մոլիբդենինը
- 4) պղնձինը

41 Արագածոտնի մարզում ո՞ր մայր ջրանցքների շնորհիվ են ընդլայնվել ոռոգովի հողատարածքները:

- 1) Մասրիկի և Կոտայքի
- 2) Շիրակի և Լոռու
- 3) Թալինի և Արգնի Շամիրամի
- 4) Լոռու և Նալբանդի

42 Տրված մարզերից ո՞րը միայն մեկ մարզի հետ ունի ընդհանուր սահման:

- 1) Տավուշի մարզը
- 2) Արմավիրի մարզը
- 3) Սյունիքի մարզը
- 4) Շիրակի մարզը

43 Այժմ ՀՀ երկաթուղային ցանցի միջին խտությունը կազմում է մոտ.

- 1) 35 կմ/1000կմ<sup>2</sup>
- 2) 22 կմ/1000կմ<sup>2</sup>
- 3) 25 կմ/1000կմ<sup>2</sup>
- 4) 30 կմ/1000կմ<sup>2</sup>

44 Ջրի կենսաբանական մաքրման մեթոդը հիմնված է.

- 1) հոսող ջրի պոտենցիալ էներգիայի օգտագործման վրա
- 2) ջրլող թռչունների փետուրների կլանման հատկության վրա
- 3) մանրէների կենսագործունեության օգտագործման վրա
- 4) խեցգետինների՝ ջրի մեջ լուծված նյութերով սնվելու վրա

45 Անագի պաշարներով հարուստ է.

- 1) Վրաստանը
- 2) Գերմանիան
- 3) Նիդեռլանդները
- 4) Ինդոնեզիան

46 Աշխարհում ամենաշատ ջուր սպառվում է.

- 1) ջրամբարներում ջրի կուտակման արդյունքում
- 2) արդյունաբերության մեջ
- 3) կոմունալ-կենցաղային տնտեսության կողմից
- 4) գյուղատնտեսության մեջ

47 Ընդերքի ռեսուրսների արդյունավետ օգտագործում է.

- 1) հանքարդյունահանման հին ավանդական մեթոդների վերականգնումը
- 2) հանքավայրերում աղքատ պաշարներով թափոնների կուտակումը
- 3) պոչամբարներում չկորզված նյութերի կուտակումը
- 4) ընդերքի ռեսուրսների համալիր յուրացումը

48 Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.

- 1) ջերմոցային տնտեսություն
- 2) ջերմոցային էֆեկտ
- 3) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 4) ջերմաստիճանի տատանման լայնույթ

49 Քարտեզի վրա Թեղեմիս գագաթը n°ր տառով է նշված:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ

50 Քարտեզի վրա Դիլիջան քաղաքը n°ր տառով է նշված:

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

